«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/139

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2025 թ. N 139

«ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Սունդուկյան 1, բն. 55, Հրաչյա Քոչար 21, Կոմիտաս 51**

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ **Ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով, 5 մայիսի 2021 թ. N 44**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հուլիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի (այսուհետ՝, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 26 հուլիսի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 16 հունվարի 2025թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 12-14 մարտի 2025թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 17 հունիսի 2025 թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 18 հունիսի 2025թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Գագիկ Քթրյան**-Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Նաիրա Արշակյան**-Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Ասյա Հակոբյան**-Երևանի հենակետային պետական բժշկական քոլեջի Պրակտիկայի բաժնի վարիչ, անատոմիայի և պաթոլոգիայի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Արեգ Խալափյան**- Երևանի հենակետային պետական բժշկական քոլեջի ուսանող, ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:
Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ՄՈՒՀ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա: Հաշվի առնելով բժշկական մասնագիտությունների առանձնահատկությունները՝ մասնագիտական մոդուլներում մեծացել է գործնական բաղադրիչը, ներդրվել են պրակտիկաների տարբեր տեսակներ, որոնց մեծ մասը կազմակերպվում է գործատուների միջավայրում: Այնուամենայնիվ, կրթական ծրագրերում առկա չեն ընտրովի դասընթացներ, և գործատուների պահանջների համադրման գործընթացները դեռևս համակարգված չեն իրականացվում: Մշտադիտարկման և բենչմարքինգի արդյունքների կիրառումը ծրագրերի վերանայման գործընթացում նույնպես սահմանափակ է: Խորհուրդ է տրվում զարգացնել կրթական ծրագրերի ճկունությունը՝ ավելացնելով ընտրովի դասընթացներ, ապահովել ծրագրերի պարբերական

վերանայումներ՝ հիմնվելով գործատուների պահանջների վերլուծության, շրջանավարտների հետադարձ կապի և համեմատական ուսումնասիրությունների վրա: Դասախոսական կազմը հիմնականում համալրված է փորձառու մասնագետներով, այդ թվում՝ գործատուներով: Սակայն բարձր միջին տարիքային շեմը և երիտասարդ դասախոսների ներգրավման սահմանափակ հնարավորությունները պահանջում են շարունակական ուշադրություն: Խորհուրդ է տրվում մշակել դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման ռազմավարություն՝ ներառելով ոլորտային վերապատրաստումների պլանավորում, մենթորության մեխանիզմներ սկսնակ դասախոսների համար: Քոլեջը հիմնականում ապահովված է կրթական գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսներով: Սակայն դրանց որոշ մասը նպատակային չի օգտագործվում, մասնաշենքերի մի մասը դեռևս վերանորոգման կարիք ունի, իսկ թվայնացման մակարդակը և գրադարանի արդիականությունը պահանջում են ուշադրություն: Խորհուրդ է տրվում՝ ռեսուրսների կառավարման գործընթացում ներդնել պլանավորված և ռազմավարական մոտեցում՝ ներառելով ուսումնական տարածքների նպատակային բաշխման, թվայնացման իրականացման, գրադարանի էլեկտրոնային ռեսուրսների ընդլայնման և գործընկերների ռեսուրսների համակարգված օգտագործման մեխանիզմներ:

II. Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:

Քոլեջում ձևավորված են կառավարման հիմնարար կառույցներ և առկա են ռազմավարական պլանավորում իրականացնելու միտումներ: Սակայն արդյունահենք կառավարման համակարգի ձևավորումը դեռևս պահանջում է բարելավումներ՝ ապահովելու կայունություն, պատասխանատվության հստակ բաշխում և շահակիցների ակտիվ ներգրավում: Կառավարման գործընթացներում առկա է որոշումների կենտրոնացում՝ տնօրենի շուրջ: Առաջարկվում է վերանայել որոշումների կայացման մեխանիզմները՝ բարձրացնելով ներգրավվածության մակարդակը բոլոր կառավարչական շերտերում և ապահովելով ղեկավարի գործունեության գնահատման հստակ չափանիշներ: Աշխատակիցների գերբեռնվածությունը վկայում է գործառույթների ոչ հավասար բաշխման մասին: Խորհուրդ է տրվում վերանայել ստորաբաժանումների գործառույթները, հստակեցնել պատասխանատվության ոլորտները և ապահովել համապատասխան ռեսուրսներ՝ ներառյալ մարդկային պոտենցիալը: Խորհուրդ է տրվում կատարել ռազմավարության վերանայում՝ ներառելով գնահատման առանցքային ցուցանիշներ և մշտադիտարկման համակարգված մեխանիզմներ, որոնք կաջակցեն հաշվետվողականությանը և ռազմավարական նպատակների իրագործման իրական գնահատմանը: Որակի ապահովման համակարգը ձևավորվել է, սակայն դրա գործառնական կիրառումը և ազդեցությունը դեռևս սահմանափակ են: Հարցումները և հաշվետվությունները հիմնականում չեն ուղեկցվում վերլուծական մոտեցմամբ, և դրանց արդյունքները սահմանափակ կիրառություն ունեն բարելավումների գործընթացում: Խորհուրդ է տրվում մշակել միասնական մեթոդաբանություն, ապահովել տարբեր շահակիցների՝ հատկապես ուսանողների և գործատուների ներգրավումը և որակի մշտադիտարկման արդյունքների նպատակային օգտագործումը:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջը համագործակցում է բժշկական և կրթական տարբեր կազմակերպությունների հետ՝ իրականացնելով փոխայցեր, գիտաժողովներ, պրակտիկաներ: Քոլեջին առաջարկվում է ձևակերպել միջազգայնացման ռազմավարություն՝ հստակ նպատակներով, պատասխանատուներով և գնահատման մեխանիզմներով: Հետազոտական միջավայրը ձևավորման փուլում է: Ուսանողները ներգրավվում են թեմատիկ նախագծերի, ռեֆերատների, իսկ որոշ

մասնագիտություններում նաև կուրսային աշխատանքների մեջ: Գործում է «Գիտական տեղեկագիր» պարբերականը: Սակայն աշխատանքները հիմնականում անհատական բնույթ ունեն, մեթոդական ուղեցույցներ և գնահատման չափորոշիչներ առկա չեն: Առաջարկվում է ներդնել հստակ ձևաչափային ու բովանդակային պահանջներ ինքնուրույն աշխատանքների համար, հետազոտական թեմաները կապակցել գործատուների առաջարկած խնդիրների և պրակտիկայի հետ՝ խթանելով ուսանողների հետազոտական և մասնագիտական մտածողությունը, վերլուծել կուրսային աշխատանքի ներդրման արդյունքները և տարածել փորձը այլ ՄԿԾ-ներում:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հուլիսի 11